



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1595

Խաչեան վանք

Հայ. Առաքելոց, Եղիշե

ՍԱՆԱՀԻՆ

Խ. ԸՆԹԱՑԻՒՆԵԼՆԻ

I.

ՍԱՆԱՀԻՆԻ ԴԻՐՔԸ ԵՒ ԿԼԻՄԱՆ

Սանահինի թերակղզիանեւ փոքրիկ բարձրավանդակը գտնուում է ծովի մակերևոյթից 1000 մետր բարձրութեան վրայ՝ ընկնելով 62°20' արևելեան երկարութեան և 41°6' հիւսիսալին լայնութեան տակի Հին Հայաստանի պատմական Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Տաշերք կամ Զորափոր գտւառումն էր, իսկ այժմ Տիֆլիսի նահանգի Լոռուալ գաւառում։

Հարաւային կողմից Սանահինի անտառապատ լեռներին կպած ալդ թերակղզին երեք կողմից զրջապատուած է ձորերով. արևելեան կողմից «Աստուածանալ» կոչուած ձորն է. արևմտեան կողմից «Սևորդեաց» կամ տեղական բարբառով «Մազու ձօր»-ը. հիւսիսալին կողմից Զորագետ կամ Դէքէտ գետի ձօրը. Հորիզոնի վրայ երևում են. արևելեան կողմից «Նորվանք» կոչուած փոքրիկ դաշտավայրը, Որնակ. գիւղի գաշտը և Հաղբատ գիւղն իր սարով. Հիւսիսալին կողմից «Մադան» կամ «Ալավերդի» կոչուած պղնձահանքը, «Կոշաքերդ»-ը. հիւսիս-արևելեան կողմից «Աթոռիկ» կոչուած փոքրիկ բարձրավանդակը. հիւսիս-արևելմտեան կողմից «Ալալուար» լեռը, որ «Գինգդար» էլ է կոչուում. Արևմտեան կողմից Սևորդեաց ձօրն է, իսկ հարաւ-արևմտեան կողմից՝ Սանահինի անտառապատ լեռները. հարաւ-արևելեան կողմից՝ Որնակի լեռները։

Սանահինի ընութիւնը գեղեցիկ է և զբաղեցնող. զրջա-

պատուած լինելով լեռներով ենթարկուած չէ մշտական-
և խիստ հողմերի, այլ ժամանակաւոր թեթև քամիների:
Անձրևներ լինում են գարնանը, մինչև յունիս ամիսը. լինում
է ժամանակ, որ զբակայ լեռներն օրերով ու շաբաթներով
ծածկուած են լինում թանձր մշուշով կամ մէգով:

II.

ՍԱՆԱՀԻՆ ԳԼՈՒՀԸ

Գիւղն այժմ ունի երեսուն տուն հայ բնակիչ՝ զանա-
գան տեղերից եկած. կան նաև Արդութեանց իշխանական
տոհմին պատկանող գիւղացի ընտանիքներ. Գիւղացիները
պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ
և արգեգործութեամբ: Կալուածքը պատկանում է Արդու-
թեանց երկայնաբազուկ իշխանական տոհմին և մասամբ էլ
վանքին—վանքը ստանում է եկամտի եօթերորդ մասը:—
Գիւղացիները շատ քիչ հող ունենալով և այն էլ մի արդ-
պիսի քարքարոտ տեղ, ստիպուած են մաքառել ընութեան-
ամեն տեսակ արհաւիրքների գէմ, պահպանելով իրենց գոյու-
թիւնը հողից ստացուած չնչին արդիւնքով: Ալգիներից շոշա-
փելի արդիւնք չեն կարող ստանալ, որովհետեւ գտնուում են
բաւականին հեռու, ձորի մէջ և ճանապարհ էլ չունին ար-
տահանելու. ալգիների թիւն էլ շատ սահմանափակ է՝ գար-
ձեալ տեղ չլինելու պատճառով: Առհասարակ ազքատ կեանք
են վարում և արդիւնարերելու ոչինչ կամ շատ քիչ
քան ունին: Մի բանով միայն սանահնեցիք յայտնի են ամ-
բողջ Լոռում—ալդ քնքուշ սեռի ներկայացուցիչների արտա-
քին գեղեցկութիւնն է. կանանց տիպը համակրելի է, գէմքի
գեղեցկութիւնը կանոնաւոր և համաչափ գծագրուած. ալդ
է պատճառն ահա, որ Սանահնեցոց մականունը Լոռում
յայտնի է իրեւ «հարսնասիրուն սանահնեցիք»: Թէ կանալք
և թէ տղամարդիկ՝ օգի և ջրի ազգեցութեան ներքոյ՝ ֆի-
զիկապէս առողջ կազմուածք ունին, ստկայն տգիտութեան-